11193

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«26» 07 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0135-23

Ձեռնարկողը՝ ***«ԳԼՈԲԱԼ ՊՐՈԳՐԵՍ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ***
ք. Երևան, Վ.Սարգսյան փ. 26/3

Գործունեությունը՝ ***Սյունիքի մարզի Սիսիանի հանքային շրջանի Այրիգետի հանքային դաշտի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0135-23

«26» հոկտեմբեր 2023թ.

Սյունիքի մարզի Սիսիանի հանքային շրջանի Այրիգետի հանքային դաշտի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ԳԼՈԲԱԼ ՊՐՈԳՐԵՍ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ, Ծրագիր /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	ք. Երևան, Վ.Սարգսյան փ. /26/3

Ներածական մաս. Այրիգետի հանքային դաշտը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանում, Սիսիան խոշորացված համայնքի Նժդեհ և Բնունիս բնակավայրերի վարչական տարածքներում, Զանգեզուրի լեռնաշղթայի հարավ-արևելյան ճյուղավորման, Բարգուշատի լեռնաշղթայի հյուսիսային լանջին՝ Դաստակերտ ավանից 3-8կմ դեպի արևմուտք, հարավ-արևմուտք և հարավ: Ուսումնասիրվելիք տարածքը արևմուտքից ձգվում է Կաշաքար լեռան հարավային և արևելյան լանջերն ընդգրկող Այրիգետի Ծաղկունք վտակի ավազանը, իսկ դեպի հարավ՝ բուն Այրիգետի ավազանի միջին և վերին հոսանքները՝ զբաղեցնելով մոտ 1495.7հա մակերես: Մոտակա բնակավայրերն են՝ Դաստակերտ ավանը (2 կմ և ավելի հեռավորության վրա), Նժդեհ և Ցղունի գյուղերը: երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների հայցվող տարածքի եզրագծերով մասնակի ներառվում են նաև Նժդեհ և Ցղունի բնակավայրերի բնակելի տարածքները, սակայն կոնկրետ աշխատանքների տեղամասերը Նժդեհ և Ցղունի բնակավայրերից ունեն նվազագույնը 200մ և առավելագույնը 3կմ հեռավորությունները:

Շրջանի հիմնական գետային զարկերակը Որոտանն է՝ իր Սիսիան և Լեռնաշեն ձախ վտակներով: Դաստակերտի հանքային դաշտը գտնվում է Սիսիան գետի աջ վտակ՝ միջօրեական ուղղությամբ հոսող Այրիգետի վերին հոսանքի ավազանում, որի Աղջկաձոր աջ վտակն անցնում է Դաստակերտ ավանի միջով: Այրիգետի հանքային դաշտի արևմտյան սահմաններում երկրաբանական ուսումնասիրությունների կատարման ծրագրի կազմման ժամանակ հաշվի է առնվել այն հանգամանքը, որ Ծաղկասարի ոսկու և Վերին Ծաղկասարի պղինձ-մոլիբդենային հանքերևակումների արևմտյան թևերը (մոտ 150 հա) համարվում են

«Զանգեզուր» պետական արգելավայրի տարածքի հետ, ինչի պատճառով այդ տարածքներում լեռնային փորվածքների անցում և հորատանցքերի հորատում չի նախատեսվել:Նախատեսվող գործնեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. «Գլոբալ Պրոգրես Մայնինգ» ՍՊ Ընկերությունը նախատեսում է Սիսիանի հանքային շրջանի Այրիգետի հանքային դաշտի սահմաններում մոտ 1495.7հա տարածքում կատարել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ՝ մետաղական օգտակար հանածոների հետախուզման նպատակով: Հետախուզաառուների անցումը նախատեսվում է իրականացնել ձեռքով և մեքենայացված՝ էքսկավատորի միջոցով: Նախատեսվում է անցնել ընդհանուր 1000գծ.մ կամ 1600մ^3 հետախուզաառու: Նախատեսվում է անցնել նաև 100 գ.մ. ընդհանուր երկարության, մինչև 5մ խորությամբ, 1.25մ^2 կտրվածքով 20 հատ հետախուզահորեր՝ ընդհանուր 125մ^3 ծավալով: Հետախուզաառուները, հետախուզահորերը, համաձայն անվտանգության տեխնիկայի և շրջակա միջավայրի պահպանության կանոնների, փաստագրումից և նմուշարկումից հետո ենթակա են լցման՝ ընդհանուր 1725մ^3 ծավալով, որի ընդհանուր մակերեսը կկազմի 825մ^2: Նախատեսվող հորատման աշխատանքների ընդհանուր ծավալը նախատեսվում է 4000գծ.մ, որից 970 գծ.մ. (7 հորատանցք)՝ Ծաղկասարի ոսկու, 1170գծ.մ. (10 հորատանցք)՝ Ներքին Ծաղկավանի պղինձ-մոլիբդենային հանքային գոտու ուսումնասիրման համար, 1860գծ.մ. (13 հորատանցք)՝ այլ հանքերևակումների նախնական գնահատման համար: Ընդամենը կանցվի 30 հորատանցք: Ըստ նախնական տվյալների տարածքում սպասվում է մինեռալոգիական երեք տիպի հանքաքար՝ պղնձի, պղինձ-բազմամետաղային և ոսկու պարունակություններով: Նախատեսվում է տեխնոլոգիական հետազոտման ենթարկել պղինձ-մոլիբդենային հանքայնացմամբ Ներքին Ծաղկավանի հանքաքարը: Ուսումնասիրությունների հիմնական խնդիրն է հանդիսանում հանքաքարի բաղադրության մեջ մտնող մետաղներից պղնձի և մոլիբդենի առանձին խտանյութերի ստացումը:

Սիսիանի հանքային շրջանի սահմանները լեռնագրականորեն տեղադրված է Բարգուշատի լեռնաշղթայի հյուսիսային լանջին, Այրիգետ գետի ջրհավաք ավազանում: Գեոմորֆոլոգիական տեսակետից շրջանը իրենից ներկայացնում է բարձր լեռնային գոտի խիստ կտրտված ռելիեֆով, որն ընդգրկված է 1950-3350մ բացարձակ բարձրությունների սահմաններում՝ ընդհուպ մինչև Բարգուշատի լեռնաշղթայի ամենաբարձր գագաթներից մեկը (Գեղաքար լեռ, 3348.3մ), և լեռնաշղթայի հարաբերական մեծ գերազանցումով գետի հունի նկատմամբ: Բարգուշատի լեռնաշղթան հանդիսանում է ջրբաժան՝ Որոտան և Ողջի գետերի միջև: Այն ձգվում է Զանգեզուրի լեռնաշղթայի Գեղաքար գագաթից դեպի արևելք՝ ավելի քան 60 կմ երկարությամբ՝ աստիճանաբար ցածրանալով Որոտանի կիրճում: Այն բնութագրվում է հովտային խոր մասնատվածությամբ: Բազմաթիվ գետերի (Այրիգետ, Լեռնաշեն, Արամազդ և այլն) հոսքերը նպաստել են խորքային եռանդուն էրոզիայի և առաջացրել են 500-700մ խորությամբ հովիտներ: Ռելիեֆին բնորոշ են էրոզիոն և տեղատարումային ձևերը, մակերևույթի խիստ կտրտվածությունը: Լանդշաֆտը տիպիկ բարձր լեռնային է՝ կտրտված խորը կիրճերով և գետերով: Ռելիեֆի առաջացման գործընթացում զգալի դեր ունեն ինչպես հին, այնպես էլ գործող սողանքները:

ՍԻՍԻԱՆԻ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՊԸ
ՍԻՍԻԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԵՆՏՐՈՆ
ՍՊԸ
ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉԱՊԵՏԱՐԱՆ

Ուսումնասիրվող երևակման ծայրակետային կոորդինատներն են՝ ARM WGS-84 կոորդինային համակարգով՝

1. X = 4358000.0 Y=8585370.0
2. X = 4359000.0 Y= 8584250.0
3. X = 4358500.0 Y= 8581350.0
4. X = 4359878.0 Y= 8581350.0
5. X = 4361000.0 Y= 8581599.0
6. X = 4361000.0 Y= 8584000.0
7. X = 4362720.0 Y= 8584000.0
8. X = 4362014.0 Y= 8586939.0
9. X = 4361754.0 Y= 8586744.0
10. X = 4360940.0 Y = 8586942.0
11. X = 4360448.0 Y = 8586756.0
12. X = 4361240.0 Y = 8586200.0
13. X = 4359280.0 Y = 8584600.0
14. X = 4358653.0 Y = 8585044.0
15. X = 4359650.0 Y = 8586450.0
16. X = 4358290.0 Y = 8587600.0

Պատճառաբանական մաս. Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումները, ինչպես նաև առողջապահության, արտակարգ իրավիճակների, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Սյունիքի մարզպետարանը, «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ը և կադաստրի կոմիտեն, որոնց կողմից ստացված կարծիքները ևս հաշվի են առնվել փորձաքննության փուլում: Սիսիանի համայնքապետարանում, Նժդեհ բնակավայրի վարչական շենքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ: 2-րդ հանրային քննարկման ընթացքում քննարկման մասնակիցների կողմից բարձրացվել է մտահոգող հարցեր՝ Այրիգետի հանքային դաշտի և «Զանգեզուր» պետական արգելավայրի համադրման մասին(150հա), Կարմիր գրքի և էնդեմիկ բուսատեսակների վերաբերյալ, ինչպես նաև, որ հայկական մուֆլոնի արեալը ներառում է Բարգուշատի և Զանգեզուրի լեռնաշղթաները, որոնց «ԳԼՈԲԱԼ ՊՐՈԳՐԵՍ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը չի տվել սպառիչ պատասխաններ:
Հայցվող տարածքի արևմտյան տեղամասը համադրվում է «Զանգեզուր» պետական արգելավայրի տարածքի հետ, որի կանոնադրության (ՀՀ կառավարության 19.12.2013 թ-ի թվականի N 1465-Ն Որոշում) 5-րդ կետի՝ պահպանության ռեժիմի համաձայն արգելավայրի տարածքում արգելվում են՝ «8) երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները

(հողային ծածկույթի խախտմամբ), օգտակար հանածոների հանքավայրերի, երևակումների շահագործումը, հանքանյութեր վերամշակող օբյեկտների տեղաբաշխումը»:

Ներկայացված հայտում նշված է որ «Ուսումնասիրվող տարածքի սահմաններում ՀՀ Կարմիր գրքում գրանցված և էնդեմիկ տեսակներ չեն հայտնաբերվել», սակայն պետք է նշել, որ հայցվող տեղամասի հարակից տարածքներից հայտնի են ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված ավելի քան 8 բույսերի տեսակներ:

Նախնական գնահատման հայտում նշված է «Հետազոտվող տարածքի համար գրական աղբյուրներում նշվում են կաթնասունների 16 տեսակներ: Կարմիր գրքում գրանցված տեսակներ չեն դիտարկվել:» Պետք է նշել, որ ըստ ՀՀ կենդանիների Կարմիր գրքի հայկական մուֆլոնի արեալը ներառում է Բարգուշատի և Զանգեզուրի (Սյունիքի մարզի Դաստակերտ գյուղից դեպի հարավ) լեռնաշղթաները:

Համաձայն Կադաստրի կոմիտեի տվյալների հայցվող տարածքի մակերեսը կազմում է 1495.7 հա, էլեկտրոնային կադաստրային քարտեզում տեղադրելիս համադրվում է պետական, համայնքային, քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականություն հանդիսացող բնակավայրերի, գյուղատնտեսական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ինչպես նաև ջրային նպատակային նշանակության մի շարք հողամասերի հետ:

Ելնելով վերոնշյալից և հաշվի առնելով ՀՀ կենդանական աշխարհի մասին օրենքի 18-րդ հոդվածի՝ արգելվում է ցանկացած գործունեություն, որը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը և դրանց ապրելավայրերի վատթարացմանը, ինչպես նաև ՀՀ ջրային օրենսգրքի 99-րդ հոդվածի պահանջները: Ընկերության կողմից հայցվող տարածքում ընդերքօգտագործման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացումը համարվում է ոչ նպատակահարմար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերը նշված փորձաքննական հիմնավորումը «ԳԼՈԲԱԼ ՊՐՈԳՐԵՍ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Սյունիքի մարզի Սիսիանի հանքային շրջանի Այրիգետի հանքային դաշտի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ
գլխավոր մասնագետ՝ Վարդան Հարությունյան